ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«02» մայիսի 2019 թվականի № 91-Ա

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 50 ՏՈԿՈՍ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 66-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին կետի «ժբ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 50 տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2018 թվականի ֆինանսական տարվա արդյունքների քննարկման նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Հաշվարկային կենտրոն», «Բարձրավոլտ էլեկտրացանցեր», «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն», «Հայատոմ», «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ», փակ բաժնետիրական ընկերությունների խորհուրդների նախագահներին.

ղեկավարվելով օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «գ», և «դ» կետերով, օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, ապահովել ընկերությունների տարեկան ընդհանուր ժողովների նախապատրաստումը և գումարումը:

2. Ղեկավարվելով Օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասով՝ «Նաիրիտ-2», «Անալիտիկ», «Ռադիոակտիվ թափոնների վնասազերծում», «Էներգաիմպեքս», «Ջրառ», «Մելիորացիա» փակ բաժնետիրական ընկերություններում սույն թվականի հունիսի 10-ին համապատասխանաբար՝ ժամը 10^{00}- ին, 10^{30}- ին, 11^{00}- ին, 11^{30} - ին, 12^{00}-ին, 12^{30}-ին (ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական շենք 3, 7-րդ հարկ, խորհրդակցությունների դահլիճ) գումարել ընկերությունների 2018 թվականի տարեկան ընդհանուր ժողովներ և հաստատել վերը նշված ընկերություններից յուրաքանչյուրի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը՝ հետևյալ հարցերով.

1) 2018 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում.

2) վերստուգողի (աուդիտի) եզրակացության ներկայացում.

3) 2018 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում.

4) 2018 թվականի տարեկան շահույթի (վնասի) հաշվի հաստատում.

5) 2018 թվականի տարեկան շահույթի բաշխման և շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

3. Ընկերությունների գլխավոր տնօրեններին.

ապահովել ընկերությունների տարեկան ընդհանուր ժողովներում քննարկվելիք հարցերով համապատասխան փաստաթղթերի ներկայացումը Նախարարություն՝ 2012 թվականի հունվարի 26-ի թիվ 03/13/231-12 գրությամբ պահանջված տեղեկատվության ներառմամբ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության գլխավոր քարտուղարին:

5/2/2019

VERIFIED OCSP 5/3/2019 08:53:34 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ